ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Պայմանագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

հիմնվելով իրենց ժողովուրդների պատմական ընդհանրության վրա եւ գիտակցելով բազմակողմ եւ փոխշահավետ տնտեսական հարաբերությունների ընդլայնման եւ խորացման կարեւորությունը,

հարգելով յուրաքանչյուր պետության ինքնիշխանությունը եւ հաստատելով կողմնակցությունը Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին հիմնադիր փաստաթղթերի նպատակներին եւ սկզբունքներին,

ձգտելով բարենպաստ պայմաններ ապահովել տնտեսությունների դինամիկ ու ներդաշնակ զարգացման եւ իրենց պետությունների բնակչության կենսամակարդակի բարձրացման շահերից ելնելով տնտեսական բարեփոխումների անցկացման համար,

գիտակցելով ապրանքների, ծառայությունների, աշխատուժի եւ կապիտալի ազատ տեղաշարժման վրա հիմնված ընդհանուր տնտեսական տարածքի ձեւավորման եւ զարգացման, ինչպես նաեւ Պայմանավորվող կողմերի տնտեսվարող սուբյեկտների ուղղակի կապերի ամրապնդման օբյեկտիվ անհրաժեշտությունը,

հասկանալով պետությունների բարձր ինտեգրացված գիտատեխնիկական եւ արտադրական ներուժի տեխնոլոգիական փոխկապակցվածության կարեւորությունը,

ձգտելով պայմաններ ստեղծել համաշխարհային տնտեսությունում իրենց տնտեսությունների սահմանափակ ներգրավման համար,

ղեկավարվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով,

պայմանավորվեցին Տնտեսական միության ստեղծման մասին:

ԳԼՈՒԽ 1
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 1

Տնտեսական միությունը ստեղծվում է կամավոր մասնակցության, ինքնիշխանության հարգման, տարածքային ամբողջականության, իրավահավասարության, ինչպես նաեւ սույն Պայմանագրի դրույթների իրագործման համար Պայմանավորվող կողմերի փոխադարձ պայմանավորվածության վրա:

Տնտեսական միության շրջանակներում իրենց գործունեությունում Պայմանավորվող կողմերը ղեկավարվում են միջազգային-իրավական հետեւյալ սկզբունքներով՝

միմյանց գործերին չմիջամտելը, մարդու իրավունքների եւ ազատությունների հարգումը,

վեճերի խաղաղ կարգավորում եւ միմյանց հետ հարաբերություններում տնտեսական ճնշման ցանկացած ձեւերի չկիրառում,

պատասխանատվություն ստանձնած պարտավորությունների համար,

Պայմանավորվող կողմերի իրավաբանական եւ ֆիզիկական անձանց նկատմամբ ազգային եւ այլ տարբերակման հիման վրա ցանկացած խտրականության բացառում,

փոխադարձ խորհրդակցությունների անցկացում Պայմանավորվող կողմերից ցանկացածի նկատմամբ սույն Պայմանագրում չմասնակցող մեկ կամ մի քանի պետությունների կողմից տնտեսական ագրեսիայի իրականացման դեպքում դիրքորոշումների համակարգման եւ միջոցների ընդունման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 2

Տնտեսական միության նպատակներն են՝

Պայմանավորվող կողմերի տնտեսությունների կայուն զարգացման պայմանների ձեւավորում՝ ի շահ իրենց բնակչության կենսամակարդակի բարձրացման,

շուկայական հարաբերությունների հիման վրա ընդհանուր տնտեսական տարածքի փուլային ստեղծում,
բոլոր տնտեսվարող սուբյեկտների հետ հավասար հնարավորությունների եւ երաշխավորությունների ստեղծում,
ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տնտեսական նախագծերի համատեղ իրականացում,
համատեղ ջանքերով էկոլոգիական հիմնախնդիրների լուծում, ինչպես նաեւ տարերային աղետների եւ պատուհասների հետեւանքների վերացում:

ՀՈԴՎԱԾ 3

Տնտեսական միությունը ենթադրում է.
ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժ,
համաձայնեցված դրամավարկային, բյուջետային, հարկային, գնային, արտաքին տնտեսական, մաքսային եւ արժութային քաղաքականություն,
Պայմանավորվող կողմերի ներդաշնակեցված օրենսդրություն,
ընդհանուր վիճակագրական հիմքի առկայություն:

ՀՈԴՎԱԾ 4

Պայմանավորվող կողմերը համաձայնել են, որ Տնտեսական միությունը ստեղծվում է ինտեգրացիայի փուլային խորացման, տնտեսական բարեփոխումների իրականացման գործում գործողությունների համակարգման միջոցով.
ազատ առեւտրի միջպետական (բազմակողմ) ասոցիացիայի,
մաքսային միության,
ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի ընդհանուր շուկայի,
արժութային (դրամային) միության:
Ինտեգրացիայի յուրաքանչյուր ձեւի համար նախատեսվում է փոխկապակցված միջոցառումների համալիր, որոնք պետք է ընդունվեն եւ իրականացվեն առանձին համաձայնագրերին համապատասխան:

ԳԼՈՒԽ 2
ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Պայմանագրի 4-րդ հոդվածին համապատասխան ազատ առեւտրի միջպետական ասոցիացիայի ստեղծման նպատակով Պայմանավորվող կողմերը իրենց փոխհարաբերություններում համաձայնել են.
տուրքերի, հարկերի եւ գանձումների, ինչպես նաեւ դրանց հետեւանքներով քանակական եւ բոլոր այլ հավասարազոր սահմանափակումների հաջորդական նվազեցում եւ վերացում,
մաքսային օրենսդրության, սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման մեխանիզմների ներդաշնակեցում,
մաքսային ընթացակարգերի պարզեցում,
մաքսային վիճակագրության համար մաքսային փաստաթղթերի ձեւերի միասնականացում,
բեռների եւ ուղեւորների փոխադրման սակագների, տարանցման ազատության սկզբունքի պահպանմամբ տարանցման սակագների փուլ առ փուլ մերձեցում,
երրորդ երկրների ոչ արտոնագրված վերարտահանման անթույլատրելիություն:

ՀՈԴՎԱԾ 6

Մաքսային միություն ստեղծելու համար Պայմանավորվող կողմերը ապրանքների,

աշխատանքների եւ ծառայությունների փոխադրման սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման լրիվ վերացման հետ մեկտեղ համաձայնվել են.

սույն Պայմանագրում չմասնակցող պետությունների հետ հարաբերություններում ընդհանուր մաքսային սակագնի սահմանում,

սույն Պայմանագրում չմասնակցող պետությունների նկատմամբ արտաքին առեւտրային քաղաքականության համակարգում:

ՀՈԴՎԱԾ 7

Ընդհանուր շուկայի անցման ընթացքում, Պայմանավորվող կողմերը.

կապիտալի եւ աշխատուժի ազատ տեղաշարժման համար կստեղծեն անհրաժեշտ իրավական, տնտեսական եւ կազմակերպչական պայմաններ,

պայմաններ կստեղծեն բարեխիղճ մրցակցության համար, ներառյալ հակամենատիրական կարգավորման մեխանիզմը,

բեռների եւ ուղեւորների արդյունավետ փոխադրման իրականացմանն ուղղված տրանսպորտի եւ հեռահաղորդակցության զարգացման բնագավառում կանցկացնեն համաձայնեցված քաղաքականություն,

կապահովեն հավասար տնտեսական պայմաններ տնտեսությունների զարգացման մեջ կապիտալների փոխադարձ ներդրման համար եւ կստեղծեն ներդրողների իրավունքների եւ շահերի պաշտպանության գործող մեխանիզմ:

ՀՈԴՎԱԾ 8

Փոխադարձ առեւտրում կկիրառվեն ազատ (պայմանագրային) գներ, որոնք ձեւավորվում են հաշվի առնելով Պայմանավորվող կողմերի ներքին շուկաների ինտեգրացիան: Պայմանավորվող կողմերը պարտավորվում են իրենց տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ չկիրառել գնային խտրականություն:

ՀՈԴՎԱԾ 9

Պայմանավորվող կողմերը, առանց փոխադարձ համաձայնության, չեն իրականացնի ոչ տնտեսական բնույթի միակողմանի գործողություններ իրենց շուկաների մատչելիությունը սահմանափակելու նպատակով:

Պայմանավորվող կողմերը կարող են համատեղ կամ անհատապես, միջազգային պրակտիկային համապատասխան, փոխադարձ առեւտրում կիրառել ժամանակավոր պաշտպանական եւ այլ միջոցներ, այդ թվում ազգային անվտանգության նկատառումներով:

Պայմանավորվող կողմերը համաձայնեցնում են այդպիսի միջոցների կիրառման կարգը եւ պայմանները՝ համապատասխան համաձայնագիր կամ համաձայնագրեր կնքելու միջոցով:

ԳԼՈՒԽ 3
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 10

Պայմանավորվող կողմերը կապահովեն իրենց տարածքներում տվյալ Պայմանագրի մասնակից պետությունների ռեզիդենտ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների գործունեության համար ազգային իրավական ռեժիմ:

ՀՈԴՎԱԾ 11

Պայմանավորվող կողմերը օժանդակում են տնտեսվարող սուբյեկտների միջեւ ուղղակի կապերի զարգացմանը, արտադրական կոոպերացիայի ամրապնդման համար

ստեղծում են բարենպաստ պայմաններ:

ՀՈԴՎԱԾ 12

Պայմանավորվող կողմերը օժանդակում են համատեղ ձեռնարկությունների, անդրազգային արտադրական միավորումների, առեւտրային եւ ֆինանսավարկային հաստատությունների եւ կազմակերպությունների ցանցի ստեղծմանը:

ՀՈԴՎԱԾ 13

Պայմանավորվող կողմերը համակարգում են իրենց ներդրումային քաղաքականությունը, ներառյալ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում օտարերկրյա ներդրումների ներգրավումը, իրականացնում են համատեղ կապիտալ ներդրումներ, այդ թվում նաեւ փոխհատուցման հիմունքներով:

ԳԼՈՒԽ 4
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 14

Պայմանավորվող կողմերը համաձայնեցնում են քաղաքականությունը դրամավարկային, արժութային եւ ֆինանսական հարաբերությունների բնագավառներում:

ՀՈԴՎԱԾ 15

Ազատ առեւտրի միջպետական ասոցիացիայի գործունեության փուլում Պայմանավորվող կողմերը իրենց արժութավարկային եւ ֆինանսական հարաբերություններում օգտագործում են՝

մուլտիարժութային համակարգը, որը ներառում է առանձին պետություններում գործող ազգային արժույթները,

Ռուսաստանի Դաշնության ռուբլու վրա հիմնված համակարգը:

Արժութային միության ձեւավորման փուլում ապահովվում է փոխադարձ հաշվարկներում միարժութային համակարգի անցումը, որը հիմնված է ընդհանուր (պահուստային) արժույթի վրա, որի հիմքում ընկած են Պայմանավորվող կողմերի առավել օգտագործվող եւ կայուն արժույթները:

ՀՈԴՎԱԾ 16

Ազգային արժույթների օգտագործման վրա հիմնված դրամաարժութային համակարգի ձեւավորումը կիրականացվի փուլ առ փուլ, դրամային միության ստեղծման միջոցով, որը հիմնված կլինի հետեւյալ սկզբունքների վրա.

ազգային արժույթների փոխադարձ ճանաչում եւ դրանց պաշտոնական գնորոշման իրականացում,

բազմակողմ քլիրինգի օգտագործմամբ, Միջպետական բանկի եւ այլ հաշվարկային կենտրոնների միջոցով ազգային արժույթներով վճարների իրականացում,

վճարային հաշվեկշիռների դեֆիցիտների համաձայնեցված փոխադարձ վարկավորման մեխանիզմի կիրառում,

ընթացիկ գործողություններով ազգային արժույթների փոխադարձ փոխարկելիության ձեռքբերում:

Ինտեգրացիոն գործընթացների խորացման հետ մեկտեղ դրամային միությունը կփոխակերպվի արժութային միության, որը նախատեսում է.

արժույթների լողացող փոխարժեքների կիրառում եւ դրանց փոխադարձ տատանումների սահմանների համաձայնեցում,

արժույթների փոխարժեքների պահպանման բանկային մեխանիզմի ներդրում,

ազգային արժույթների լրիվ փոխարկելիության ձեռքբերում:

ՀՈԴՎԱԾ 17

Նոր բնույթի ռուբլու գոտու ստեղծմանն ուղղված գործնական միջոցների մասին համաձայնագիր կնքած կամ այդ համաձայնագրին միացած պետությունները, կարգավորում են դրամական համակարգերի միավորմանն ուղղված միջոցները ռուսական կողմի հետ կնքած երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 18

Պայմանավորվող կողմերը անց են կացնում հարկային համակարգերի հաջորդական ներդաշնակեցում: Նրանք միասնականացնում են հիմնական հարկերի տեսակները, ինչպես նաեւ հարկերի գանձման (հարկման սուբյեկտները եւ օբյեկտները) եւ հարկային դրույքների կիրառման մասին օրենսդրական դրույթները:
Պայմանավորվող կողմերի հարկային համակարգերի ներդաշնակեցումը իրականացվում է Տնտեսական միության շրջանակներում իրականացվող հարկային քաղաքականության մասին առանձին համաձայնագիր կնքելու միջոցով, ինչպես նաեւ արտադրության վրա կատարվող ծախսերի հաշվառման մեթոդոլոգիայի միասնականության հիման վրա:

ԳԼՈՒԽ 5
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 19

Պայմանավորվող կողմերը Տնտեսական միության տարածքի սահմաններում ապահովում են իրենց քաղաքացիների՝ առանց մուտքի արտոնագրի տեղաշարժման կարգը:

ՀՈԴՎԱԾ 20

Պայմանավորվող կողմերը անհրաժեշտ են համարում, Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների եւ երաշխավորությունների դրույթներին համապատասխան, աշխատանքային հարաբերությունների բնագավառում իրենց քաղաքականության համաձայնեցումը եւ արտադրության ու սպառողական շուկայի վիճակի հաշվառմամբ բնակչության եկամուտների կարգավորման հիման վրա անաշխատունակ եւ սակավ ապահովված քաղաքացիների կենսամակարդակի պահպանման անհրաժեշտությունը:

ՀՈԴՎԱԾ 21

Պայմանավորվող կողմերը թույլ չեն տալիս ազգային կամ ցանկացած այլ տարբերակմամբ քաղաքացիների նկատմամբ խտրականություն աշխատատեղերի տրամադրման, աշխատանքի դիմաց վճարման, աշխատանքի այլ պայմանների ապահովման, սոցիալական երաշխիքների տրամադրման հարցերում:

ՀՈԴՎԱԾ 22

Պայմանավորվող կողմերը փոխադարձ ճանաչում են մյուս Պայմանավորվող կողմերի աշխատակիցների կրթության եւ որակավորման վերաբերյալ փաստաթղթերը առանց դրանց լրացուցիչ հաստատման, եթե դա չի պահանջում աշխատանքի պայմանները եւ բնույթը:

ՀՈԴՎԱԾ 23

Պայմանավորվող կողմերը համակարգված քաղաքականություն են իրականացնում աշխատանքի պայմանների ու պահպանության բնագավառում, հաշվի առնելով հանրաճանաչ

միջազգային կանոնները, աշխատանքի պահպանության նորմերին ու կանոններին ընդհանուր պահանջների մոտեցումը, աշխատանքի պայմանների պետական հսկողության եւ փորձաքննության իրականացումը:

ՀՈԴՎԱԾ 24

Պայմանավորվող կողմերը կկնքեն առանձին համաձայնագրեր, որոնք կկարգավորեն աշխատուժի միգրացիան եւ սոցիալական ապահովագրության, քաղաքացիների կենսաթոշակային ապահովության բնագավառներում եւ այլ հարցերով փոխադարձ պարտավորությունները, որոնք պահանջում են Տնտեսական միության կազմի մեջ մտնող պետությունների կողմից նման համաձայնեցում:

ԳԼՈՒԽ 6
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 25

Պայմանավորվող կողմերի եւ նրանց տնտեսվարող սուբյեկտների միջեւ տնտեսական հարաբերությունները կարգավորվում են սույն Պայմանագրով, երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերով, միջազգային իրավունքի նորմերով եւ ազգային օրենսդրությամբ: Այն դեպքում, եթե սույն Պայմանագրով սահմանված են ազգային օրենսդրությամբ նախատեսվածից այլ նորմեր եւ կանոններ, ապա կիրառվում են միջազգային իրավունքի եւ սույն Պայմանագրի կանոնները եւ նորմերը:

ՀՈԴՎԱԾ 26

Պայմանավորվող կողմերը, ընդունելով տնտեսական հարաբերությունների միատեսակ կարգավորման ձեռքբերման անհրաժեշտությունը, համաձայնեցին համապատասխանեցնել ազգային օրենսդրությունը սույն Պայմանագրի եւ միջազգային իրավունքի նորմերին:

Այդ նպատակներով Կողմերը պայմանավորվեցին.

մշակել տնտեսական փոխհարաբերությունները կարգավորող նմուշային ակտեր,

նմուշային նախագծերի եւ միջազգային իրավունքի նորմերի հիման վրա աշխատանք կատարել գործող ազգային օրենսդրության համակարգման եւ մերձեցման ուղղությամբ դրանցում հակասությունների վերացման նպատակով,

համաձայնեցնել տնտեսական հարցերով ազգային օրենսդրական նոր ակտերի ընդունումը,

անցկացնել նորմատիվ ակտերի նախնական փորձաքննություն, որոնք ապահովում են այդ բոլոր ակտերի համապատասխանությունը միջազգային իրավունքի, սույն Պայմանագրի, երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերի նորմերին:

ԳԼՈՒԽ 7
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ (ՄԱՐՄԻՆՆԵՐԸ)

ՀՈԴՎԱԾ 27

Տնտեսական միության գործունեության ապահովման համար Պայմանավորվող կողմերը օգտագործում են գոյություն ունեցող եւ ստեղծում են նոր համատեղ գործադիր եւ համակարգող ինստիտուտներ:

Տնտեսական միության գործունեության հետ կապված Պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի որոշումները ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ՝ միաձայնությամբ: Ցանկացած պետություն կարող է հայտարարել այս կամ այն հարցում իր ոչ շահագրգիռ լինելու մասին, ինչը չպետք է դիտվի որպես այդ որոշման ընդունման համար խոչընդոտ:

ՀՈԴՎԱԾ 28

Տնտեսական միության ինստիտուտների ձեւավորման, գործունեության եւ ֆինանսավորման կարգը, դրանց գործունեության համադրումը Անկախ Պետությունների Համագործակցության տնտեսական մարմինների գործունեության հետ, կարգավորվում են առանձին համաձայնագրերով:

ԳԼՈՒԽ 8
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 29

Անդամակցությունը Տնտեսական միությանը հանգեցնում է սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալի ընդունում եւ բոլոր իրավունքների ձեռքբերում եւ խոչընդոտ չի հանդիսանում այդ միության կազմի մեջ մտնող պետությունների, ինչպես նաեւ տնտեսական խմբավորումների եւ միավորումների հետ, եթե դա չի հակասում Տնտեսական միության շահերին, տնտեսական կապերի իրականացման գործում:

Պայմանավորվող կողմերը սույն Պայմանագրի իրագործման համար փոխադարձ պարտավորություն են կրում, ձեռնպահ են մնում դրա իրագործումը սպառնալիքի տակ դնող ցանկացած քայլերից:

ՀՈԴՎԱԾ 30

Պետությանը, որը պատրաստակամություն է հայտնել ստանձնել սույն Պայմանագրից բխող պարտավորությունների մի մասը, Տնտեսական միության անդամների համաձայնությամբ, կարող է տրամադրվել ասոցիացված անդամի կարգավիճակ: Տնտեսական միությանը ասոցիացված անդամի իրավունքներով պետությունների միանալու պայմանները սահմանում են Տնտեսական միության անդամները:

ՀՈԴՎԱԾ 31

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են լուծել սույն Պայմանագրի մեկնաբանման եւ իրագործման հետ կապված վիճելի հարցերը բանակցությունների կամ Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանին դիմելու միջոցով:

Եթե Տնտեսական դատարանը ընդունում է, որ Տնտեսական միության որեւէ անդամ պետություն չի կատարել սույն Պայմանագրով ստանձնած իր պարտավորություններից որեւէ մեկը, ապա այդ պետությունը պարտավոր է Տնտեսական դատարանի որոշման կատարման հետ կապված միջոցներ ձեռնարկել:

Պայմանավորվող կողմերը կմշակեն եւ կկնքեն Տնտեսական միության անդամ պետությունների սուբյեկտների տնտեսական հարաբերությունների հետ կապված վիճելի հարցերի ուսումնասիրման կարգի, ինչպես նաեւ ստանձնած պարտավորությունների չկատարման համար պատժամիջոցների համակարգի մասին հատուկ համաձայնագիր:

Վիճելի հարցերը բանակցությունների կամ Անկախ Պետությունների Համագործակցության Տնտեսական դատարանի միջոցով լուծելու անհնարինության դեպքում Պայմանավորվող կողմերը համաձայնել են լուծել դրանք միջազգային այլ դատական մարմիններում դրանց կանոններին ու ընթացակարգերին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 32

Սույն Պայմանագրի վերաբերյալ վերապահումներ չեն թույլատրվում:

Սույն Պայմանագրում, Պայմանավորվող կողմերի ընդհանուր համաձայնությամբ, կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

ՀՈԴՎԱԾ 33

Պայմանագիրը կնքվում է 10 տարի ժամկետով եւ ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակաշրջաններով, եթե Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը չի հայտարարի Պայմանագրում իր մասնակցությունը դադարեցնելու մասին:

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է հայտարարել սույն Պայմանագրից դուրս գալու մասին՝ առնվազն 12 ամիս առաջ ծանուցելով մյուս Պայմանավորվող կողմերին:

ՀՈԴՎԱԾ 34

Սույն Պայմանագիրը այն ստորագրած Պայմանավորվող կողմերի կողմից ենթակա է վավերացման՝ նրանց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան:

Սույն Պայմանագիրը բաց է Անկախ Պետությունների Համագործակցության ցանկացած նրա դրույթները ճանաչող մասնակից պետության միանալու համար՝ Պայմանագրի մասնակիցների համաձայնության դեպքում:

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահ պետությանը երրորդ վավերագիրը ի պահ հանձնելուց հետո:

Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում է Պայմանագիրը կամ միանում է դրան ավանդապահ պետությանը երրորդ վավերագրի կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնելուց հետո, Պայմանագիրը ուժի մեջ կմտնի այդ պետության կողմից իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

Սույն Պայմանագրի ավանդապահ պետությունը Բելառուսի Հանրապետությունն է:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի սեպտեմբերի 24-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի հուլիսի 26-ից: